

լեզուական խրթնությամբ ու անհաւասարութեամբը: Կը տիրանայ հարուստ երանգապնակի մը, ուրկէ բոլոր գոյները, դիւրին ընտրութեամբ մը, կ'առնէ նկարելու համար բազմերանգ բնութիւնը ճշգրիտ գոյներով: Առատաբոլիս եւ կշտացնող արտայայտութիւն մը ունի: Հակառակ ասոր, չես կրնար բառ մը պակսեցնել իր նախադասութենէն որ պիտի կաղար, պիտի գունատէր: Զուտ գաւառական բառերու եւ ձեւերու գործածութեան մէջ շոյլ եւ անփոյթ չէ. իրը՝ ամէնէն աւելի սերտ աղերս ունի բուն պոսական աշխարհաբարին հետ, որմէ կը տարբերի մերթ նախադասութեան կազմութեամբ, մերթ բառերու ձեւաւորումով: Պոլսականին եւ գաւառականին այս հաճելի ու դաշնակաւոր բարեխառնութիւնը իր գործին հրապոյրներէն մէկը կը կազմէ:

Ինծի համար, Զարդարեան մեր ժամանակակից գրականութեան վարպետներէն մէկն է: Իմ հաճոյքներէս մէկն է արդէն իր արձակը, հիմակ աւելի կոկուած, զտուած, կանոնաւորուած, զոր կը կարդամ ամէն օր, եւ որ հակառակ լրագրական հեւասպառ աշխատանքի մը արդիւնքն ըլլալուն, բարձրօրէն գրական է, գեղեցիկ է, պատկերալից է եւ խրոխտ: Իր դէմքը, իբրեւ գրական մարդ եւ իբրեւ գործիչ, ամէնէն համակրելիներէն մէկն է, որոնց կը հանդիպինք մեր ազգային վերջին երեսնամեայ կեանքին մէջ: Նախանձի եւ մախանքի ալիքին տակ, որ ընդհանրապէս կը գոյանայ բարձր անհատականութեանց շուրջը, ան կը կենայ աննկուն եւ աւելի խրոխտ, ճիշտ այն խրոխտութեամբը, որով մեզ կը ներկայացնէ իր հոյակապ գամբը: Ո՞վ կը նայի քոթոթներուն վայնասունին եւ անոնց ցոյց տուած կոտրտած ժանիքներուն: Եւ արդէն մեր ցեղին ալ այս չէ՞ եղած ընթացքը դարերու ընդմէջէն: Թորգոմեան զարմը կը քալէ, անսասան, դժոխային խառնաշփոթութեան մը մէջ, խուժաններու գազանային ժխորին եւ խածատիչ գրոհներուն մէջ: Կը քալենք, սակայն, մինչ ահա սա թոպէիս իսկ մեր երակներուն մէջ մնացած արեան մասնիկները, քաշել հանել կ'ուզէն, մինչ կարծես